

ԵՂԻՇԵՒԻ ՄԻ ՍԿՋՐՆԱՂԱՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Եղիշեի կյանքն ու գործունեությունը, մանավանդ թողած գրական ժառանգությունը մշտապես գտնվել են հայագիտության ուշադրության ոլորտում¹։ Եղիշեի աշխատությունների մեծ մասն արժանացել է մեկից ավելի հրատարակությունների²։ Նրա թողած մատենագրական ժառանգության մասին եղած հնագույն հիշատակությունը թերևս Կ. Գանձակեցու հետևյալ վկայությունն է. «Սուրբ Եղիշէ զՊատմութիւն սրբոց Վարդանանցն, և զԳիրս կանոնացն, և այլ մեկնութիւնս Գրոց սրբոց և զարարանաց փրկչին»³։ Գանձակեցին, ինչպես տեսնում ենք, անվանապես հիշատակում է միայն Վարդանանց պատմությունը, մինչդեռ Եղիշեի ճառերը, մեկնությունները, «Հարցմունք և պատասխանիք» երկը և այլ աշխատանքներ չեն հիշատակվում, ուստի դրանց գոյությունը պիտի ենթադրել համապատասխան ժանրային հղումների տակ։ Մեզ հետաքրքրող «Հարցմունք և պատասխանիք» երկի հրատարակությունը իրացրել է անվանի հայագետ Ն. Ակինյանը, ֆրանսերեն թարգմանությունը՝ Ս. Կոզյանը⁴։ Եղիշեի հիշյալ աշխատանքին ծանոթանալիս դժվար չէ նկատել, որ հեղինակը ձեռքի տակ ունեցել է և օգտվել է Փիլոնի, Արիստոտելի, Բարսեղի, Ծղնիկի, ինչպես նաև Գրիգոր Նյուսացու համարույթ աշխատանքներից։ Նշված մատենագիրների աշխատությունների հիշատակությանը կարելի է հանդիպել Եղիշեի տվյալ երկի ամենատարբեր հատվածներում։ Սկզբնաղբյուրների հղման այդ իրողությունը արձանագրվել է նաև հրատարակության սեղմ առաջաբանում։ «Հարցմունք և պատասխանիք» աշխատանքի և Արիստոտելի «Ցաղագս աշխարհի», ինչպես նաև «Պենդոց գրքի» առնչակցությանն անդրադարձել է Ա. Վարդանյանը⁵։ Ինչ վերաբերում է Նյուսացի-Եղիշե ենթադրվող ընդհանրությանը, ապա համեմատությունը ցույց է տալիս, որ Եղիշեն մի ընդարձակ հատվածում վերապատմում է Գրիգոր Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» աշխատության այն ուրվագրը, ուր խոսվում է բուսական և կենդանական աշխարհի պտղավորման բնույթի ու առանձնահատկությունների մասին։ Ստորև ներկայացնում ենք Եղիշեի համապատասխան հատվածը սկզբնաղբյուրի համադրությամբ։

¹ Նրա մասին եղած գրականության ցանկը տե՛ս Եղիշէի վասն Վարդանայ Է. Հայոց պատերազմին, աշխատությամբ Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1957, էջ 204—219։

² Տե՛ս Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1838, էջ 1—307, Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 5—382։

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 29։

⁴ Եղիշէի վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի Գիրս ծննդոց, հրատարակեց՝ հ. Ներսես վ. Ակինյան, Վիեննա, 1928, էջ 7—68, հմմտ. ֆրանսերեն թարգմանությունը. Elisée Vardapet, Questions et Réponses sur la genese, publié par Nerses Akintian, radult par dr. Sa'ia Kozian, Vienne, 1928, p. 5—68։ Ն. Ակինյանը գործիս հեղինակային պատկանելության չուրջ կասկած չունի, մինչդեռ Ա. Վարդանյանը փորձում է ցույց տալ, որ «Հարցմունք և պատասխանիք» երկի հեղինակը Եղիշեն չէ, այլ, ինչպես ենթադրում է Ղ. Ալիշանը, ԺԳ դարի մատենագիր Վահրամ վարդապետը (տե՛ս Ա. Վառլանեան. Եղիշէի վարդապետի Հարցմունք և պատասխանիք ի Գիրս ծննդոց (Հանդես ամսօրյա, 1929, № 1, էջ 1—10, № 2, էջ 65—79)։ Հոդվածը շարունակելի հղում ունի, իսկ չի շարունակվել։ Տվյալ գործի հեղինակային պատկանելության խնդրի քննությունը մեր նպատակից դուրս է։

⁵ Տե՛ս Հանդես ամսօրյա, 1929, № 1, էջ 3, № 2, էջ 71—78։

Գրիգորի եպիսկոպոսի, եղբաւր
Քաւաղի. Տեսութիւն ի մարդոյն
կազմութիւն⁶

[Մաշտոցի անվան Մատենադա-
րան, ձեռ. № 468 (ստորագրութեամբ,
ԺԲ-ԺԳ դդ.)]
Այլ որպէս ի ցորեան ասեմք եւ
կամ յայլում իմիք սերմանեացն
զամենայն ի ներքս փակիլ զաւ-
րութեամբ ըստ հասակին տե-
սակ, խոտն, ցողունն ի մէջ
ծրունքն, պտուղն, քիստն եւ
ոչ ինչ ի նոցանէն ի բնութեանն
բանի յառաջագոյն գոլ եւ կամ
յառաջագոյն լինել ասեմք բնու-
թեամբ սերմանն: Այլ դասիլ իմն
բնութեանն այն, որ կայ ի ներքս
ի սերմանն զաւրութիւնն երեւել,
սակայն ոչ այլ ի սմա սերմանիլ
բնութիւն, ըստ նմին բանի եւ
զմարդկային (էջ 96ա) սերմն
կարծեցաք յառաջնում գոյացու-
թեանն պատճառի ի միասին
սերմանեալ բնութեանն զաւրու-
թիւն եւ տարածանիլ եւ երեւիլ ի
ձեռն բնական իմն կարգաւորու-
թեան, առ կատարեալն յառաջ
անցեալ, ոչինչ ընկալեալ արտա-
քուստ ի պատճառս կատարելու-
թեան, այլ զինքն ի կատարեալն
ի ձեռն կարգի մատուցեալ» (էջ
96 բ, հմմտ. ձեռ. № 469, «ժո-
ղովածու», 1260 թ., էջ 186 ա):

Առաջադրված դրվագների ընդհանրությունն բնութից անկախ նկատելու
է, որ Եղիշէի սկզբնաղբուրների շարքում անվանապես հիշատակվում է
նաեւ Գր. Նյուսացու անունը. «ամանք ասացին՝ յորոց է Գրիգոր Նիւսացի»:
Ավելին. բուն շարադրանքի ընթացքում նա կրկին նկատում է, որ առաջադրու-
վող բացատրությունը և ցորենի օրինակի վկայությունը (սաւրիկնակ բերէ
զհատ ցորենոյ») ևս մատուցվում են ըստ բյուզանդական մատենագրի շա-
րադրանքի: Ինչ վերաբերում է Նյուսացու հատվածի հայերեն թարգմանու-
թյան և բնագրի փոխհարաբերությանը, պիտի ասել, որ հայերեն թարգմա-
նությունը համընթաց է բնագրին: Չկան թարգմանության բնութիւն ու թարգ-
մանչի նախասիրութեամբ պայմանավորված նկատելի փոփոխություններ ու
միջամտություններ: Ահա այսպիսի տեսք ունի վկայակոչված հայերեն հատ-
վածի հունարեն համապատասխանությունը. «Ἀλλ' ὅσπερ ἐν τῷ αἴτῳ φάμεν
τὸ ἐν ἐτέρῳ τινὶ τῶν σπερμάτων. αἴταν ἐμπεριεληθῇ τῇ δυνάμει τὸ κατὰ τὸν στήχυν
εἶδος, τὸν χόρτον. τὴν χαλάμην. τὰς διὰ μέσου ῥίζας. τὸν καρπὸν, τοὺς ἀνθήριχας,
καὶ οὐδὲν τούτων ἐν τῷ τῆς φύσεως λόγῳ προῖπαρχεῖν, ἢ προγίνεσθαι φάμεν τῇ φύσει
τοῦ σπερματός, ἀλλὰ τὰς μὲν τινὶ φυσικῇ τῇ ἐγχευμένῃ τῷ σπέρματι δύναμι
ἐκνευροῦσθαι, οὗ μὲν ἐτέρῳ ἐπεισχυρνεσθαι εὐδαίον· κατὰ τὸν αὐτὸν λόγον καὶ τῇ
ἀνθρῶπινῃ σπερμῶν ἐπειληφόμεν ἔχειν ἐν τῇ πρώτῃ τῆς συστάσεως ἀφορμῇ σὺν-»

⁶ Գրիգոր յորում է իմն մասնատրական յաղագս աշխարհիս բնախաւսութեան եւ գեղեցիկ
իմն եւ պայծառ պատմութիւն:

Եղիշէի վարդապետի Հարցմունք
եւ պատասխանիք ի Գիրս ծննդոց

«Ոմանք ասացին՝ յորոց է Գրի-
գոր Նիւսացի, թէ ի սերմնն որ
անկանի յորովայն կնոջն՝ կայ
բանական հոգին, եւ զգայականն
եւ շնչականն զաւրութեամբ (էջ
44) եւ ընդ սերմանն անելոյն
եւ մարդ լինելոյն՝ եւ նոքա փայ-
լեն: Եւ արինակ բերէ զհատ
ցորենոյ եւ զայլոց սերմանց, զի
ի նոյն հատ որ սերմանի՝ կան
զաւրութեամբ տակքն եւ բոյսքն,
շաւառն եւ քիստ եւ այլն, թէպէտ
ի հատն ոչ երեւին այլ զաւրու-
թեամբ կան ի նմա. այսպէս եւ
ի մարդոյ կատարելոյ, որ զամե-
նայնն լիով ունի՝ սերմնն որ ան-
կանի ի կինն, զամենայնն լիով
ունի նոյն սերմն զաւրութեամբ,
որպէս տունկ հատեալ յորթոյ եւ
տնկեալ՝ զաւրութեամբ զամե-
նայն ինչ զորթոյն ունի՝ զուռ եւ
զպտուղ եւ զտերեւ» (էջ 44—
45):

παρμένην τήν της φύσεως δύναμιν. Ἐξάπλοῦσθαι δὲ καὶ φανεροῦσθαι διὰ τινος φυσικῆς ἀπολοιθίας πρὸς τὸ τελειὸν προιοῦσαν, οὐ προσλαμβάνουσάν τι τῶν ἐξωθεν εἰς ἀφοριτῶν τελειώσεως· ἀλλ' ἐαυτὴν εἰς τὸ τελειὸν δι' ἀπολοιθίας προάγουσαν⁷.

Վերոբերյալ զուգադիր դրվագներում, ինչպես տեսնում ենք, նմանության ընդարձակ օրինակներ չկան, իբրև ընդհանրության նշար կարող է մատնացուցվել ընդամենը մեկ-երկու արտահայտություն: Այսպես, օրինակ, Գր. Նյուսացու «ցորեան... յայլում իմիք սերմանեացն» կապակցության դիմաց Եղիշեի հատվածում ունենք նույնաբնույթ «ցորենոյ եւ զայլոց սերմանց» կամ՝ «զմարդկային սերմն կարծեցաք յառաջնում գոյացութեանն պատճառի» դիմաց՝ «սերմանն աճելոյն եւ մարդ լինելոյն» և այլն: Սակայն նշված հատվածների շրջանակներում նմանության օրինակներ փնտրելը ինքնին ճիշտ չէ, որովհետև ասվեց, որ Եղիշեն վերապատմում է սկզբնաղբյուրի համապատասխան միտքը և ոչ թե այս կամ այն պատրաստի դրվագը նույնությամբ իր շարադրանքի մեջ մուծում, ինչպես դա արվում է «երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանությունների հայոց ինքնուրույն գրականության վրա թողած հետքերում: Նյուսացի-Եղիշե ընդհանրության առաջադրված դրվագը ունի մեկ այլ առանձնահատկություն ևս. մատենագրական առնչակցության սույն օրինակը ոչ հաճախադեպ այն դեպքերից է, երբ մեր գրական հուշարձանը կրում է բյուզանդական մատենագրության ազդեցության կնիքը ոչ թե հայերեն թարգմանության ընդունված ճանապարհով, այլ անմիջականորեն բնագրի միջնորդությամբ: Տվյալ պարագայում բացատրության այլ եղանակ առաջադրելը ճիշտ չէ: Պահպանված մատենագրական վկայությունների համաձայն, Գր. Նյուսացու հիշյալ երկը հայերեն է թարգմանել VIII դ. մատենագիր Ստ. Սյունեցին: Ունենք Ստ. Օրբելյանի ուղղակի վկայությունը Ստ. Սյունեցու թարգմանական գործունեության մասին. «թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիսացու զհինութեան և զկազմութեան»⁸, Ձեռագրերում բազմիցս հիշատակվող ու մեկնաբանվող այս արժեքավոր վկայությանը անդրադարձել են Գ. Զարբանավյանը⁹, Զ. Տաշյանը¹⁰ և այլք: Մեր օրերի հետազոտող Մ. Գրիգորյանի հաշվարկների համաձայն, հուշարձանիս թարգմանությունը կատարվել է «717 թուին, Կ. Պոլսոյ մէջ, Դաւիթ հիւպատոսի օգնութեամբ...»¹¹: Հասկանալի պատճառով Եղիշեն չէր կարող ծանոթ լինել Գր. Նյուսացու աշխատանքի հայերեն թարգմանությանը և օգտվել դրանից:

Համադրվող հատվածները ուշագրավ իրողություն են ներկայացնում նաև բառազանձի առումով: Դրանցում կարելի է մատնացուցել բառեր, որոնք այլուր ավանդված չեն, ուստի և միայն առաջադրվող վկայությամբ են հայկերի: Այսպես, օրինակ, Գր. Նյուսացու հատվածում ունենք ծրուեք բառը «ի մէջ ծրուեքն» կիրառությամբ, որը նոր հայկազյան բառարանագիրների բացատրությամբ նշանակում է «յօղք ծղօտից և եղեգանց»¹²: Բնականաբար, սույն մեկնաբանության հիմքը Գր. Նյուսացու համապատասխան հատվածն է, որովհետև բառիս կիրառության այլ օրինակ-հղում բառարանագիրներին ծանոթ չէ: Ի մէջ ծրուեքն հայերեն կապակցության հիմքը բնագրի οὐα μὲν αὖ ζῶντας¹³ (ընդ մէջ գօտի)¹⁴ արտահայտությունն է: Եղիշեի հատվածում իբրև բառական եզակի վկայության օրինակ հիշատակելու է շատ բառը¹⁵:

⁷ Patrologiae cursus completus. Series graeca (այսուհետև՝ PG), t. 44, p. 236.

⁸ Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Յորէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 135:

⁹ Գ. Զարբանավյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 371:

¹⁰ Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, կաղմեաց Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 681:

¹¹ Մ. վրդ. Գ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ-Լիբանան, 1955, էջ 32:

¹² Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԲ), հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1029:

¹³ PG, t. 44, p. 236.

¹⁴ ՆԲ, հ. Ա, 1029:

¹⁵ Տե՛ս ՆԲ, հ. Բ, 1837, էջ 474:

Այսպիսով, վերոշարադրյալը ընդհանրացնելու դեպքում կարելի է եզրակացնել, որ «Հարցմունք և պատասխանիք» աշխատության հեղինակը, ի թիվս այլ աղբյուրների, օգտվել է նաև Գր. Նյուսացու «Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն» երկի հունարեն բնագրից: Ասվեց, որ այն հայերենի է թարգմանվել VIII դարում, Ստ. Սյունեցու ձեռքով: Համադրվող հատվածների նման տեղիները հիմնականում ընդհանուր-իմաստային են և ոչ բառական հատվածական:

ОБ ОДНОМ ПЕРВОИСТОЧНИКЕ ЕГИШЕ

К. М. МУРАДЯН

Р е з ю м е

Сочинения Григория Нисского (IV в.) оказали определенное влияние на труды исконно армянских авторов, являясь литературным первоисточником для многих из них, не говоря уж о роли этих произведений в новообразованных армянских школах того периода. Сравнение всех известных нам примеров из гомилий и писем Григория Нисского в армянской средневековой литературе дает основание констатировать, что Егише использовал не армянский перевод «О построении человека» Гр. Нисского, а именно его древнегреческий оригинал.

ON ONE ORIGINAL SOURCE BY EGHISHE

K. M. MURADIAN

S u m m a r y

The works by Gregory of Nissa (IV c.) have produced a certain effect on the works of the initially Armenian authors, being the original literary source for quite a number of them, to say nothing of the role of these works in the newly founded Armenian schools of the same period. Comparison of all available documents like the homilies and letters by Gregory of Nissa in the Armenian Medieval literature enables us to conclude that Eghishe used a source other than the Armenian translation of „On the Construction of Man» by Gr. of Nissa, probably its Old Greek original.